ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ
ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ք. Աշտարակ, Ն. Աշտարակեցու անվան հրապարակ 7, 0201
հեռ. /0232/ 3-10-26, ashtarakmunicipality@gmail.com

19 ԱՊՐԻԼԻ 2017թ.

ԹԻՎ 731

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ,
ՊԱՐՈՆ՝ Գ. ԳՅՈՉԱԼՅԱՆԻՆ

Էլեկտրոնային տարբերակով Ձեզ է ուղարկվում Աշտարակ քաղաքային համայնքի ավագանու կողմից 2017թ. ապրիլի 14-ին ընդունված որոշումները /արձ. 6/:

Առդիր՝ 21 էջ:

Թ. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ

Կատարող՝
Գ. Դապտումյան
/0232/3-52-02

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

14-ը ապրիլի 2017թ.

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ/

N 1 - Ն ՈՐՈՇՈՒՄ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի առաջին կետի 1-ին ենթակետի և <Բյուջետային համակարգի մասին> ՀՀ օրենքի 35/1 հոդվածի պահանջներով, համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

- Հաստատել 2017 թվականի բյուջեի առաջին եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականը.

	Վարչական բյուջե	*Ֆոնդային բյուջե*	*Ընդամենը*
Եկամտային մաս	101919.1	2816.2	104735.3
Ծախսային մաս	79615.3	2201.1	81816.4

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԿՈՂՄ - 14 *ԴԵՄ - 0* *ՁԵՌՆՊԱՀ - 0*

ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ	ՍԱՄՎԵԼ ՇՈՒԽՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ	ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ	ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ
ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ	ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ	ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ	ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ
ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ	ՄՈՒՇԵՂ ՏԱՇՉՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

14-ը ապրիլի 2017թ.

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻ ՔԱՆԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ՄԱՍՈՎ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ն 2 - Ա ՈՐՈՇՈՒՄ

Հիմք ընդունելով որոշ ֆիզիկական անձանց դիմումները, ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի, 42-րդ ենթակետի, <Հողի հարկի մասին> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի և <Գույքահարկի մասին> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով, համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

- Աշտարակ համայնքի մի քանի սեփականատերերի տրամադրել գույքահարկի և հողի հարկի արտոնություն /հավելված 1/:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԿՈՂՄ - 14 *ԴԵՄ - 0* *ՉԵՌՆՊԱՀ - 0*

ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ	ՍԱՄՎԵԼ ՇՈՒԽՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ	ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ	ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ
ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ	ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ	ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ	ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ
ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ	ՄՈՒՇԵՂ ՏԱՇՉՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

Հավելված 1

Հաստատված է համայնքի ավագանու
14.04.2017թ. N 2-Ա որոշմամբ

ԳՈՒՅՔԱՀԱՐԿ	***ՀՈՂԻ ՀԱՐԿ***	***ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ***
18 191,00		Սմբատ Թադևոսյան
17 492,00		Ասատուր Վարեկյան
30 000,00		Անահիտ Մովսեսյան
253 148,00		Արամ Կարապետյան
15 000,00		Անահիտ Մուրադյան
28 543,00		Արմեն Կարապետյան
	1 600,00	Թագուշ Բոցինյան
20 000,00		Կարեն Սիմոնյան
382 374,00	1 600,00	

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ. Դ Ա Տ ՈՒ Մ Յ Ա Ն

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

14-ը ապրիլի 2017թ.

<ԱՇՏԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆ ՈՒ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ> ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 14.11.2016Թ. N 6-Ա ԵՎ 19.01.2017Թ. N 4-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Զ. ԳԵՎՈՐԳՅԱՆ/

N 3 - Ա ՈՐՈՇՈՒՄ

Հիմք ընդունելով Աշտարակ համայնքի հնգամյա զարգացման ծրագով նախատեսված Կոմիտասի անվան զբոսայգում պլանավորվող աշխատանքների կազմակերպումը, ինչպես նաև աղբահանության և սանիտարական մաքրման ծավալների մեծացումը, ղեկավարվելով <Իրավական ակտերի մասին> ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի, <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 28-րդ կետի, <Նվազագույն աշխատավարձի մասին> ՀՀ օրենքի, <Կուտակային կենսաթոշակների մասին> ՀՀ օրենքի պահանջերով, համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1.Հաստատել Աշտարակի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը /կցվում է հավելված՝ 1, 2/:

2.ՀՈԱԿ-ներում 1974 թվականի հունվարի 1-ին և դրանից հետո ծնված, նվազագույն 72752 դրամ դրույքաչափով, աշխատողների համար՝ 77904 դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է 2017թ.-ի ապրիլի 1-ից:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԿՈՂՄ - 14 *ԴԵՄ - 0* *ՁԵՌՆՊԱՀ - 0*

ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ	ՍԱՄՎԵԼ ՇՈՒԽՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ	ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ	ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ
ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ	ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ	ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ	ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ
ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ	ՄՈՒՇԵՂ ՏԱՇՉՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

Հաստատված է համայնքի ավագանու
14.04.2017թ. N 3-Ա որոշմամբ

Հավելված 1 "Բարեկարգում" ՀՈԱԿ

Աշխատակիցների թվաքանակը՝ 38

N	Հաստիքացուցակ	Հաստիքային միավորը	1 միավորի դրույքաչափը /դրամ/	Ընդամենը	Աշխատակիցների թվաքանակը
1	Տնօրեն	1	170000	170000	1
2	Հաշվապահ	1	100000	100000	1
3	ինժեներ	1	140000	140000	1
4	Տնօրենի տեղակալ/մենեջեր	1	140000	140000	1
5	Վարորդ-կոյուղագործ	1	պայմ.	0	1
6	Լուսավորության համակարգի պատասխանատու	2	106000	212000	2
7	Տարաբանվոր	4	100000	400000	6
8	Զբոսայգու անվտանգության աշխատակից	2	120000	240000	2
9	Այգեպան	2	120000	240000	2
10	Անձնագրավար	1	90000	90000	1
11	Տարաբանվոր	20	պայմ.	0	20
	ԸՆԴԱՄԵՆԸ	36		1732000	38

Հավելված 2 "Կոմունալ" ՀՈԱԿ

Աշխատակիցների թվաքանակը՝ 47

N	Հաստիքացուցակ	Հաստիքային միավորը	1 միավորի դրույքաչափը /դրամ/	Ընդամենը	Աշխատակիցների թվաքանակը
1	Տնօրեն	1	230000	230000	1
2	Փոխտնօրեն	1	170000	170000	1
3	Գերեզմանատան պատասխանատու	1	150000	150000	1
4	Գերեզմանատան "Զախ ափ" տեղամասի պատասխանատու	1	90000	90000	1
5	Հաշվապահ	1	135000	135000	1
6	Հաշվետար	1	110000	110000	1
7	Վարորդ	6	150000	900000	6
8	Մեխանիզատոր	1	170000	170000	1
9	Բանվոր	7	130000	910 000	7
10	Հավաքարար	12	120000	1440000	12
11	Հաշվառիչ	5	Պայմ.	0	5
12	Տարաբանվոր	10	Պայմ.	0	10
ԸՆԴԱՄԵՆԸ		47		4305000	47

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ. Դ Ա Տ ՈՒ Մ Յ Ա Ն

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

14-ը ապրիլի 2017թ.

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՓՈԽԱՆՑՎԱԾ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՐԿՈՒ ՀՈՂԱՄԱՍԵՐ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ/

Ն 4-Ն ՈՐՈՇՈՒՄ

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ ՀՀ կառավարության 07.09.2006թ. N1398-Ն որոշմամբ համայնքին հանձնված 529-015 ծածկագրից 0,095հա և 529-011 ծածկագրով 0,0613հա գյուղատնտեսական նշանակության հողամասերը /վարելահող/ փոխանցվել են որպես ֆիզիկական անձի սեփականություն, սակայն իրականում վերը նշված հողամասերը հանդիսանում են համայնքային սեփականություն, ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 18 հոդվածի 21 կետի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀԿԱԱԳԿՊԿ-ի նախագահի 01.06.2010թ. N 186-Ն հրամանով հաստատված կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրահանգը, համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Համայնքի վարչական տարածքում գտնվող, 529-015 ծածկագրից 0,095հա և 529-011 ծածկագրով 0,0613հա գյուղատնտեսական նշանակության հողամասերը /վարելահող/ ճանաչել համայնքային սեփականություն և օտարել աճուրդ-վաճառքով՝ 1քմ-ի մեկնարկային գինը սահմանելով կադաստրային արժեքի 100%-ը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԿՈՂՄ - 14 *ԴԵՄ - 0* *ՁԵՌՆՊԱՀ - 0*

ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ	ՍԱՄՎԵԼ ՇՈՒԽՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ	ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ	ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ
ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ	ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ	ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ	ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ
ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ	ՄՈՒՇԵՂ ՏԱՇՉՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

14-ը ապրիլի 2017թ.

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐԳՆԱ ԵՎ ՆԵՐՔԻՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Զ. ԳԵՎՈՐԳՅԱՆ/

Ն 5-Ա ՈՐՈՇՈՒՄ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետի պահանջներով, համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Հաստատել <Աշտարակ քաղաքի ներգնա և ներքին զբոսաշրջության զարգացման> հայեցակարգը՝ համաձայն հավելված 1-ի:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԿՈՂՄ - 14 *ԴԵՄ - 0* *ՁԵՌՆՊԱՀ - 0*

ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ	ՍԱՄՎԵԼ ՇՈՒԽՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ	ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ	ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ
ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ	ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ	ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ	ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ
ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ	ՄՈՒՇԵՂ ՏԱՇՉՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

Հաստատված է համայնքի ավագանու
14.04.2017թ. N 5-Ա որոշմամբ



ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ
ՆԵՐԳՆԱ ԵՎ ՆԵՐՔԻՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

2017թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 2

1. Համայնքում զբոսաշրջային ոլորտի զարգացման միտումներն ու խնդիրները 2

2. Աշտարակ քաղաքում զբոսաշրջության ներկա իրավիճակը և զարգացման հեռանկարների ընդհանուր բնութագիրը 3

3. Ընդհանուր դրույթներ 4

4. Հայեցակարգի նպատակը, խնդիրներն ու սկզբունքները 4

5. Աշտարակում զբոսաշրջության զարգացման արդյունքը 5

6. Հայեցակարգի և զարգացման Ծրագրի իրականացման նախադրյալները և իրագործման մեխանիզմները 6

7. Ներգնա զբոսաշրջության զարգացմանն ուղղված միջոցառումների համակարգը 6

8. Աշտարակում զբոսաշրջության զարգացման ռազմավարական ուղղությունները 7

9. Զբոսաշրջության ոլորտի մասնագետների ուսուցում և վերապատրաստում 8

10. ՏԻՄ դերը ներգնա զբոսաշրջության զարգացման գործում 8

11. Տուրիստական ոլորտի զարգացման արդյունավետությունը 9

Հավելվածներ 10

Հավելված 1 10

Օգտագործված գրականություն 10

Հավելված 2 11

Հավելված 3 12

Հավելված 4 13

Ներածություն

Աշտարակ քաղաքում ներգնա և ներքին զբոսաշրջության զարգացման ներկայացվող հայեցակարգը՝ հետագայում Հայեցակարգ, գնահատում է համայնքի զբոսաշրջային հատվածի զարգացման խնդիրներն ու միտումները, սահմանում է ներգնա և ներքին զբոսաշրջության զարգացման հիմնական ուղղությունները, դիտարկում է այս ոլորտի զարգացման արդյունավետությունը համայնքի զարգացման համար:

Հայեցակարգն այն հիմնական փաստաթուղթն է, որի հիման վրա է մշակվելու Աշտարակի, որպես զբոսաշրջային կենտրոնի զարգացման համալիր Ծրագիրը:

Առաջարկվող հայեցակարգի անհրաժեշտությունը պայմանավորված է Հայաստանում զբոսաշրջության զարգացման աճի տեմպերով, և նրանով, որ Աշտարակն ունենալով լուրջ զբոսաշրջային ներուժ՝ շահավետ աշխարհագրական դիրք, պատմամշակութային հարուստ ժառանգություն, բնական յուրօրինակ ռեսուրսներ, ինչպես նաև մարդկային հզոր ներուժ, առ օրս լիարժեք օգուտներ չի քաղում քաղաքով անցնող զբոսաշրջիկների հոսքից:

Հայեցակարգը մշակվել է հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությունում ընդունված համապատասխան օրենսդրական փաստաթղթերը (տե՛ս Հավելված 1 Օգտագործված գրականություն), Հայաստանում ներգնա զբոսաշրջության ուղղությամբ իրականացված պետական և միջազգային ծրագրերը, ինչպես նաև բնակավայրերում/համայնքներում զբոսաշրջության կայուն զարգացման միջազգային փորձը:

1. Համայնքում զբոսաշրջային ոլորտի զարգացման միտումներն ու խնդիրները

1. Հանդիսանալով Հայաստանի տուրիստական-ռեկրեացիոն ռեսուրսների անբաժան մասը, և ունենալով տուրիստական բարձր հետաքրքրություն առաջացնող բազմաթիվ գրավչություններ Աշտարակն առ օրս չի հանդիսանում զարգացած, կամ զարգացող զբոսաշրջային կենտրոն ինչպիսիք են Դիլիջանը, Գորիսը կամ Ջերմուկը:

2. Ներկայացվող փաստաթղթում՝ չխորանալով նշված իրավիճակի պատճառների մեջ, ուզում ենք համառոտ ներկայացնել Աշտարակի զբոսաշրջային հնարավորությունները և քայլեր ձեռնարկել մեր համայնքում այս ոլորտի համալիր զարգացման ուղղությամբ:

2. Աշտարակ քաղաքում զբոսաշրջության ներկա իրավիճակը և զարգացման հեռանկարների ընդհանուր բնութագիրը

- Աշտարակ քաղաքն իր հանգուցային աշխարհագրական դիրքի շնորհիվ գտնվում է դեպի մեր հանրապետության հյուսիս տանող գլխավոր ճանապարհին: Աշտարակով են անցնում Երևանից դեպի Գյումրի և Վանաձոր տանող ավտոմայրուղիները, որոնք իրենց հերթին հասնում են մեծ տուրիստական հետաքրքրություն ներկայացնող Հաղպատ և Սանահինի վանքերին և մեր հարևան Վրաստանի սահմաններին: Բացի դրանից Աշտարակի անմիջական հարևանությամբ են գտնվում մեր երկրի և ժողովրդի բազմադարյան պատմության անբաժանելի մասը հանդիսացող այնպիսի հայտնի պատմական վայրեր, ինչպիսիք են Օշականն ու Ամբերդը, Հովհաննավանքն ու Սաղմոսավանքը, որոնք ընդգրկված են Հայաստանի ամենատարածված տուրիստական երթուղիների ցանկում:

- Նույնը կարելի է ասել նաև Աշտարակ քաղաքում գտնվող սուրբ Մարիանե, և Կարմրավոր եկեղեցիների մասին: Առանձին տեղ են զբաղեցնում պատմական Մետաքսի ճանապարհի հուշարձանները, որն իր վերածնունդն է ապրում որպես միջազգային զբոսաշրջային նախագիծ: Մեծ նշանակություն ունեն նաև Աշտարակում գործող թանգարանները (Պռոշյանի թանգարան), պատմական հուշարձաններն (հին կամուրջ և ջրաղաց, հին բաղնիք) ու հանգստի գոտիները (Աշտարակի Ձոր), որոնք հանդիսանում են նաև տեղացիների հանգստի և ընտանեկան ժամանցի սիրված վայրերից: Առանձին պետք է նշել այս կետում նշված Աշտարակի կենտրոնում գտնվող «Աշտարակի պատմական եռանկյունին» կազմող գրավչությունները: Սուրբ Մարիանե եկեղեցին, Հին ջրաղացը և Հին Կամուրջը: Սույն Հայեցակարգով առաջարկվող աշխատանքների առաջին փուլով նախատեսվում է ձևավորել Հին Աշտարակ զբոսաշրջային թաղամասը (տես Հավելված):

- Ցավոք կան նաև քանդված վիճակում գտնվող պատմական նշանակություն ունեցող կոթողներ, որոնցից են XIV դ. Սպիտակավոր եկեղեցին: Սակայն տվյալ փաստաթղթի ձևաչափը թույլ չի տալիս ավելի խորը լուսաբանել նշված հարցերը: Նույնիսկ այս համառոտ թվարկումը բավական է հասկանալու Աշտարակ համայնքի պատմական հուշարձանների տուրիստական գրավչության հեռանկարը գործի գրագետ և ճիշտ կազմակերպելու դեպքում:

- Ինչպես ասացինք, ունենալով նմանատիպ հարուստ պատմական ներուժ, մեր համայնքը չի կարողանում ստանալ այն օգուտը զբոսաշրջային այցելությունների հոսքերից, որը կարող էր:
- Զբոսաշրջության զարգացմանը խոչընդոտում է Աշտարակի զբոսաշրջային սպասարկման թույլ զարգացած ենթակառուցվածքը՝ որն ինչպես հյուրանոցային այնպես էլ սննդի սպասարկման տեղերի քանակությամբ և որակով չի

համապատասխանում Հայաստան ժամանող բազմաթիվ զբոսաշրջիկների ակնկալիքներին և պահանջներին: Ոստի այդ պատճառով դեպի հյուսիս գնացող զբոսաշրջիկները չեն օգտվում մեր համայնքի ծառայություններից, և չեն տալիս քաղաքին և բնակչությանը այն լրացուցիչ եկամուտը, որը կարող էին: Զբոսաշրջության զարգացմանը խոչընդոտող գործոններից են նաև սպասարկող անձնակազմի մասնագիտական ցածր մակարդակը, Աշտարակի որպես գրավիչ զբոսաշրջային կենտրոնի մասին բավարար քանակությամբ տպագիր և էլեկտրոնային տեղեկատվության խիստ պակասը: Չկան արդիական և հավաստի վիճագրական և շուկայագիտական տվյալներ, որոնք թույլ կտան առավել ճշգրիտ գնահատել Աշտարակի զբոսաշրջային ներուժը և կանխատեսել ոլորտի զարգացումը: Այսպիսով, Աշտարակն ունենալով շատ հարուստ հնարավորություններ, զբոսաշրջության զարգացման համար չի կարողանում իրականացնել դրանք:

3. Ընդհանուր դրույթներ

1. Հիմնական հասկացություններ: Զբոսաշրջային ոլորտ ասելով հասկանում ենք հյուրանոցների, հյուրատների, տուրիստական այլ կացարանների, սննդի կազմակերպման, տրանսպորտային միջոցների, ժամանցային և զվարճանքի վայրերի, ճանաչողական և գործնական, առողջարարային, մարզական նշանակության հաստատությունների, ինչպես նաև տուրօպերատորական և տուր գործակալային և էքսկուրսիոն և տուրիստական տեղեկատվական գործունեություն իրականացնող կազմակերպությունների ամբողջությունը:

2. Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի փետրվարի 13-ի նիստի N 6 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած Զբոսաշրջության զարգացման հայեցակարգի՝ զբոսաշրջության բնագավառի պետական քաղաքականության նպատակն է մեծացնել զբոսաշրջության նեդրումն ազգային եկամտի ավելացման, համաչափ տարածքային զարգացման, բնակչության կենսամակարդակի բարձրացման և աղքատության նվազեցման գործընթացում՝ պայմանավորված՝
   1) զբոսաշրջային այցելությունների թվի աճով.
   2) զբոսաշրջությունից ստացված եկամտի ավելացմամբ.
   3) աշխատատեղերի ստեղծմամբ:

4. Հայեցակարգի նպատակը, խնդիրներն ու սկզբունքները՝

Ներկայացվող ***Հայեցակարգի նպատակն է*** Աշտարակ քաղաքում արդի պահանջներին համապատասխանող զբոսաշրջային-ռեկրեացիոն համալիր ծառայությունների ձևավորմանն ուղղված առաջարկների մշակումը:

Սույն *Հայեցակարգն ուղղված է* Աշտարակ համայնքում արդի և մրցունակ զբոսաշրջային համալիր առաջարկի ձևավորմանը, որն իր հերթին՝

1. Պայմաններ և նախադրյալներ կապահովի զբոսաշրջային պահանջարկի բավարարման համար.
2. Նոր նախադրյալներ և հիմքեր կստեղծի Աշտարակ համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման համար:

Հայեցակարգի ակնկալվող արդյունքն է Աշտարակ համայնքում զբոսաշրջության զարգացման համալիր Ծրագրի մշակումը:

Սույն *Հայեցակարգի խնդիրներն են*:

1. Աշտարակում ներգնա զբոսաշրջության զարգացման ծրագրի մշակում
2. Հայեցակարգում ներկայացվող մոդելի հաջող իրականացման պայմանների, նախադրյալների և մեխանիզմների սահմանումը.
3. Հայեցակարգի իրագործման ռեսուրսների և ցուցիչների սահմանումը.
4. Հայեցակարգի իրականացման ընթացքում հնարավոր խոչընդոտների բացահայտումը:

Հայեցակարգի մշակվել է հետևյալ *սկզբունքներով*.

1. Համակարգային մոտեցում՝ Հայեցակարգի բոլոր տարրերի փոխկապակցվածությունը.
2. Ամբողջականություն՝ Հայեցակարգի տարրերի նկարագրություն.
3. Բալանսավորվածություն՝ հայեցակարգի իրականացման շահագրգիռ խմբերի՝ ներառյալ քաղաքացիների, շահերը հաշվի առնելը.
4. Բնապահպանական գործոն՝ պահպահել և բարելավել բնապահպանական միջավայրը:

5. Աշտարակում զբոսաշրջության զարգացման արդյունքը

Աշտարակ քաղաքում ներգնա զբոսաշրջության զարգացումը կնպաստի համայնքի տնտեսական և սոցիալական խնդիրների լուծմանը:

1. Աշտարակի համայնքային բյուջեի համալրում
2. Առևտրային, հյուրանոցային և տուրիստական այլ հաստատություններից լրացուցիչ հասույթի ավելացում
3. Համայնքի բնակչության կողմից զբոսաշրջիկների սպասարկումից ուղղակի և անուղղակի եկամուտների ավելացում
4. Լրացուցիչ ներդրումների ներգրավվում և նոր աշխատանքային տեղերի ստեղծում
5. Գործող տուրիստական գոտիների բարելավում և նոր գոտիների ստեղծում

6. Զբոսաշրջության, առևտրի և սպասարկման ոլորտներում լրացուցիչ աշխատանքային տեղերի ստեղծում:
7. Ենթակառուցվածքի զարգացում:

6. Հայեցակարգի և զարգացման Ծրագրի իրականացման նախադրյալները և իրագործման մեխանիզմները

Ներկայացվող հայեցակարգի իրականացման համար նախատեսում ենք կատարել հետյալ քայլերը:

1. Հայեցակարգի և զարգացման ծրագրի իրականացման համար ստեղծել զբոսաշրջության զարգացման խորհուրդ (տես Հավելված 3)
2. Մշակել զբոսաշրջության զարգացման Ծրագիր:
3. Ապահովել պետական և մասնավոր հատվածների արդյունավետ համագործակցություն:
4. Հիմնական սկզբունքը մասնավոր-պետական կառույցների միջև սերտ համագործակցության իրականացում
5. Զարգացման ծրագրի ամենօրյա իրականացման նպատակով ստեղծել առանձին կառույց
6. Հայեցակարգի իրագործման օրացուցային ծրագիր/ ժամանակացույց: նախնական հաշվարկը 3 երեք տարի ժամանակահատվածով՝ առաջին տարին մանրամասն ժամանակացույցով:
7. Ծրագրի արդյունքի չափում և ակնկալվող արդյունքի արձանագրում: Իրականացված փառատոնների, մշակութային միջոցառումների թիվը, Աշտարակ այցելած զբոսաշրջիկների թվի ավելացում, տուրիստական տեղեկատվական կենտրոնների քանակը, տուրիստական կացարանների, սննդի կետերի թիվ, և այլ ցուցանիշներ:

7. Ներգնա զբոսաշրջության զարգացմանն ուղղված միջոցառումների համակարգը

Վերոնշված նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է մի շարք խնդիրների լուծումը: Նշված կետերը կզարգացվեն Աշտարակի Զբոսաշրջության զարգացման Ծրագրի մեջ:

1. Ոլորտը զարգացնող և համակարգող խորհրդի ձևավորում
2. Աշտարակի զբոսաշրջային ենթակառուցվածքի զարգացում
3. Քաղաքի մրցունակությունը բարձրացնող միջոցառումների իրականացում
4. Շուկայական ռազմավարության մշակում և իրագործում
5. Ընթացիկ վիճակի մշտադիտարկում և վերլուծություն

6. Տեղեկատվական համակարգի ստեղծում: Զբոսաշրջության զարգացման ծրագրի տեղեկատվական աջակցություն,
7. Տրանսպորտային ենթակառուցվածքի բարելավում՝ ճոպանուղի, կայանատեղեր,
8. Տուրիստական ենթակառուցվածքի զարգացում՝ տեղեկատվական կրպակներ, էքսկուրսիոն երթուղիներ, տեսարժան վայրերի ցուցանակներ:
9. Տուրիստական կացարանների և սննդի հաստատությունների գործունեության մշտադիտարկում սպասարկման որակի մակարդակին հետևելու նպատակով:
10. Աշտարակի, որպես տուրիստական քաղաքի՝ տուրիստների հոսքերին և սպասարկման բարձր մակարդակի պահանջներին համապատասխանող տուրիստական սննդի հաստատությունների թվի ավելացում
11. ՓՄՁ ոլորտի աջակցության ծրագրեր
12. Աշտարակ ժամանող զբոսաշրջիկների կեցության տևողությունը երկարացնելուն ուղղված համագործակցություն տուրիստական բիզնեսի հետ:
13. Նոր տուրիստական երթուղիների մշակման առաջարկությունների քննարկում: Հեծյալ՝ ձիարշավային զբոսաշրջային տուրեր:
14. Ժամանցային հաստատությունների ավելացում
15. Բնապահպանական ծրագրերի աջակցություն և նախաձեռնում
16. Դպրոցականների արձակուրդների ժամանակահատվածում կազմակերպված ժամանցի ուղղությունների
17. Շարժական սահմանափակումներով զբոսաշրջիկների համար հատուկ հնարավորությունների ստեղծում:
18. Մասնագիտական վերապատրաստման ծրագրեր:
19. Քաղաքի բարեկարգման աշխատանք՝ փողոցների և պատմական հուշարձանների տարածքի մաքրություն և աղբահանություն, հասարակական զուգարանների առկայություն, կանաչապատում,
20. Մշակութային և ժամանցային միջոցառումների կազմակերպում

8. Աշտարակում զբոսաշրջության զարգացման ռազմավարական ուղղությունները

Հաշվի առնելով Աշտարակի ներկայացված զբոսաշրջային ռեսուրսները, կարող ենք խոսել ստորև ներկայացվող զբոսաշրջության հետևյալ տեսակների զարգացման հեռանկարների մասին՝

1. Պատմա-ճանաչողական
2. Մշակութային
3. Բնության ռեսուրսների օգտագործմամբ
4. Արշավային-արկածային
5. Ճամբարային-մարզական
6. Հնագիտական

7. Խոհանոցային
8. Ժամանցային
9. Գյուղական
10. Իրադարձային - ազգագրական
11. Կրոնական և ուխտագնացային
12. Հանգստյան օրվա երթուղի:

9. Զբոսաշրջության ոլորտի մասնագետների ուսուցում և վերապատրաստում

Առաջարկվող հայեցակարգի կարևորագույն կետերից է մարդկային ռեսուրսների՝ տեղացի որակյալ մասնագետների մասնագիտական ուսուցումը, որի հիմնական կետերը ներկայացնում ենք ստորև:

1. Գործող ռեստորանների և տուրիստական կացարանների անձնակազմի վերապատրաստում
2. Տեղեկատվական կենտրոնների անձնակազմի ուսուցում
3. Էքսկուրսավարների ուսուցում
4. Տուրիստական գրավչությունների՝ պատմական հուշարձանների, թանգարանների, աշխատողների ուսուցում
5. Բնակչության համար կազմակերպվող դասընթաց Աշտարակում տուրիզմի կայուն զարգացման հեռանկարների վերաբերյալ

10.ՏԻՄ դերը ներգնա զբոսաշրջության զարգացման գործում

Գիտակցելով, որ ստանձնած գործի պատասխանատվությունը ՀՀ համապատասխան օրենսդրական դաշտի շրջանակում հանդիսանում է Աշտարակի համայնքային կառավարման մարմինների պատասխանատվության ոլորտը, այստեղ առանձնացնենք նաև հետևյալ կետերը.

1. Հյուրանոցային տեղերի ավելացում
2. Սննդի կետերի ավելացում
3. Սպասարկման և առևտրի ոլորտի աշխատողների մասնագիտական վերապատրաստում
4. Համագործակցություն միջազգային դոնոր կառույցների հետ
5. Աշտարակի և քույր քաղաքների միջև փոխանակման ծրագրերի իրականանացում
6. Մարդկային ռեսուրսների զարգացում՝ մասնագիտական ուսուցում
7. Համագործակցություն Հայաստանի տուրիստական կազմակերպությունների հետ
8. Զբոսաշրջային երթուղիների անվտանգության ապահովում
9. Աշտարակի գրավիչ կերպարի ձևավորում՝ քաղաքի տուրիստական բրենդի մշակում և առաջքաշում:

10. Նպաստել թանգարանների գործունեությանը
11. Պատմական և մշակութային ժառանգության պահպանություն
12. Տեղեկատվական աջակցության համակարգի մշակում
13. Գովազգային աշխատանք

11.Տուրիստական ոլորտի զարգացման արդյունավետությունը

Ծրագրի նպատային իրականացման ցուցիչներ

- Համայնքային բյուջեի մուտքերի ավելացում
- Նոր աշխատանքային տեղերի ստեղծում
- Ենթակառուցվածքի բարելավում
- Նոր տուրիստական գրավչությունների ստեղծում
- Բնակչության կյանքի որակի լավացում
- Վճարովի տուրիստական ծառայությունների իրացում (տարեկան մլն. դրամ)
- Նախորդ տարիների համեմատ տուրիստական ծառայությունների վաճառքի աճ (%)

Հավելվածներ

Հավելված 1

Օգտագործված գրականություն

1. Հայաստանի Հանրապետության օրենք «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին»
2. ՀՀ զբոսաշրջության զարգացման հայեցակարգ
3. ՀՀ զբոսաշրջության օրենք
4. Հյուրանոցային ծառայությունների որակավորման ընթացակարգ
5. Զբոսաշրջությանն աջակցության ծառայություններ: 2016 թվականի ծրագիր
6. Զբոսաշրջության հայկական ընկերակցություն: 2001, Տուրիզմի կայուն զարգացման ձեռնարկ:
7. Ф.А. Геворкян, «Армения туристская». Ереван 2006
8. Энциклопедия путешественника. Ереван 1990.
9. Советская Армения. Справочник-путеводитель. Ереван 1980.
10. UNWTO (Միավորված ազգերի կազմակերպության զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության (այսուհետ՝ ՄԱԿ-ի ԶՀԿ)) զբոսաշրջության կայուն զարգացման նախաձեռնություն 2012

Հավելված 2

Աշտարակի և մոտ տարածքների զբոսաշրջային գրավչությունների համառոտ ցանկ:

Եկեղեցիներ: Ծիրանավոր (V-VI դդ), Կարմրավոր (VII դ.), Սուրբ Մարիանե (1821թ.), Սպիտակավոր (XIII-XIV դդ), Սուրբ Սարգիս (XIII դ)

Պատմական հուշարձաններ

Քարի կամուրջ 1664 թ., խաչքարեր (XII-XIV դդ)

«Վերին Նավեր» դամբարանադաշտ: Գտնվում է Աշտարակից 4 կմ հեռավորության վրա, դեպի Ագարակ տանող ճանապարհին, 4500 տարեկան:

«Որարտական առու» ջրամատակարարման-ոռոգման համակարգ, 3000 տարեկան:

Նաև Աշտարակին մոտ են գտնվում մի շարք գրավչություններ, որոնց այցելությունը նույնպես կնպաստի Աշտարակում զբոսաշրջության զարգացմանը:

Աղձք – Արշակունիների դամբարան 364թ.

Ամբերդ ամրոց IX-XIII դդ.

Բյուրական աստղադիտարան,

Հայկական տառերի պուրակ:

Մուղնու վանք 1664-1669, Հովհաննավանք (IV-V դդ.), Սաղմոսավանք (XIIIդ.)

Դիդի կոնդ –կիկլոպյան ամրոցի ավերակներ (VIII-VI մ.թ.ա.)

Այլ պատմական հուշարձաններ և վայրեր:

Հավելված 3

Զբոսաշրջության զարգացման խորհրդի կազմը:

Ղեկավարվելով Հայաստանում տարբեր բնակավայրերում՝ Ջերմուկ, Վայք, Իջևան, Դիլիջան, Գորիս, իրականացված զբոսաշրջության զարգացման ծրագրերի փորձով, նախատեսվում է կազմել զբոսաշրջության զարգացման խորհուրդ՝ դրանում ընգրկելով հետևյալ մարմինների ներկայացուցիչներին ըստ ոլորտների.

Աշտարակի համայնքապետարան (Ճարտարապետական, իրավաբանական, մշակույթի բաժինների ներկայացուցիչներ),

Առողջապահության ոլորտ:

Պատմական հուշարձանների պահպանության վարչություն:

Արտակարգ իրավիճակների նախարարություն

Ոստիկանություն

Գործարարներ՝ հյուրընկալության, սննդի, առևտրի ոլորտի, ներկայացուցիչներ,

Թանգարանների տնօրեններ,

Մշակույթի տան տնօրեն,

Երաժշտական կոլեկտիվների, պարի խմբերի ղեկավարներ,

Ուսումնական հաստատություններ,

Տեղական ԶԼՄ ներկայացուցիչներ,

Անհատ քաղաքացիներ, որոնց փորձն օգտակար կլինի խորհրդի աշխատանքին՝ պատմաբաններ, ճարտարապետներ

Հավելված 4

Աշտարակի պատմական եռանկյունի

Սույն Հայեցակարգով առաջարկվում է Աշտարակի պատմական կենտրոնում՝ Սբ. Մարիանե, Կարմրավոր, Ծիրանավոր, Պ.Պռոշյանի տուն-թանգարան, Սպիտակավոր, և Սուրբ Սարգիս եկեղեցի, Հին Ջրաղաց, Հին Կամուրջ, Հին բաղնիք «պատմական եռանկյունին» կազմող տարածքում կազմակերպել զբոսաշրջային ազգագրական թաղամաս:

Առաջարկվող թաղամասի տարածքում գտնվող սեփական տների սեփականատերերն իրենց տներում զբոսաշրջիկների համար կկազմակերպեն B&B (Bed & Breakfast) սկզբունքով գործող տուրիստական կացարաններ: Սա կլինի առաջին քայլն Աշտարակում լրացուցիչ տուրիստական ծառայություններ կազմակերպելու փորձ:

Ներկայացված Եռանկյունին միանալու է նշված պատմական գրավչությունները «կապող» ճոպանուղին: Սա հնարավոր կդարձնի զբոսաշրջիկներին փոխադրվել ոչ միայն ավտոմոբիլային, այլ նաև օդային ճանապարհով:

Նույն թաղամասում նախատեսվում է կազմակերպել հուշանվերների և ազգային կերակրատեսակների պատրաստում-վաճառք: Այս մոտեցումը լայն տարածում է գտել միջազգային փորձի մեջ, ինչը համապատասխանում է զբոսաշրջության կայուն զարգացման սկզբունքներին: